Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2012թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2012թ.ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գործունեության կարևոր արդյունքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

ա/ «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում (ղեկ. բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրապետյան) հնագիտական հետախուզության արդյունքներով հայտնաբերվել են երկու նոր հնավայրեր՝ քարանձավային բնակավայր Անիի տարածաշրջանի Սարատակ գյուղի տարածքում եւ վաղբրոնզիդարյան բնակավայր ու դամբարանադաշտ Անիի տարածաշրջանի Բագրավան գյուղի տարածքում:

բ/ «Արեւմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ.» արխիվային նյութերի ու փաստաթղթերի ժողովածուի /512 էջ/ հրատարակմամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի ազգային արխիվում պահպանվող ավելի քան 120 նորահայտ փաստաթղթեր /զեկուցագրեր, խնդրագրեր, հոդվածներ, հեռագրեր, գաղթականական կոմիտեր նիստերի արձանագրություններ, որբանոցների անվանացանկեր, պաշտոնական գրություններ եւ այլն/, որոնք կարեւոր արժեք ու նշանակություն ունեն մեր նորագույն շրջանի պատմության մի շարք խնդրահարույց հարցերի նորովի գիտական մեկնաբանության տեսակետից:

գ/ Ախուրյանի ավազանի մ.թ.ա. առաջին հազարամյակի պատմության վերաբերյալ սեպագիր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են հայ առասպելաբանության նոր, խորքային շերտեր, որոնք գիտականորեն հիմնավորում են տարածքի՝ հնագույն հնդեվրոպական-հայկական բնակչություն ունենալու իրողությունը:

2. 2012թ. ՇՀՀ կենտրոնում բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ-2» գիտական թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ս.Հայրապետյան) հետազոտական աշխատանքներ են կատարվել ծրագրով նախատեսված բոլոր ուղղություններով՝ Շիրակի հնագիտություն, ազգագրություն եւ պատմություն:

Հաշվետու տարում կենտրոնի հնագետների խումբը իրականացրել է հետեւյալ աշխատանքները. Հունիս-հուլիս ամիսներին շարունակվել են Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանի՝ վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի, հոկտեմբերին՝ Հայկաձորի վաղերկաթիդարյան ամրոց-բնակավայրի պեղումները: Համագործակցելով Գերմանիայի Հալեյի համալսարանի հնագիտական արշավախմբի հետ՝ կենտրոնի հնագետները (Հ.Խաչատրյան, Լ.Եգանյան) հոլիս-օգոստոս ամիսներին պեղել են նաեւ Ազատանի մ.թ.ա.9-7-րդ դարերով թվագրվող ամրոցը, բնակավայրը եւ վաղհայկական ժամանակաշրջանի դամբարանադաշտը, իսկ օգոստոս-սեպտեմբերին Էքս-ան-Պրովանս (Ֆրանսիա) համալսարանի արշավախմբի հետ՝ Երերույքի տաճարի մերձակա տարածքը: Շարունակվել է պեղումներով գտածո նյութերի կամերալ ուսումնասիրությունը: Գիտականորեն արժեւորվել է Մեծ Սեպասարի հնավայրից հայտնաբերված ծիսական առարկաների պաշտամունքային դերը հնդեվրոպական դիցաբանության եւ հավատալիքների համատեքստում: Անի մայրաքաղաքի օրգանական շարունակությունը հանդիսացող Հայկաձորի քարանձավային բնակավայրում նոր գտածոների ու բնակարանների հայտնաբերմամբ նորովի մեկնաբանություն են ստանում քաղաքի այդ հատվածի ճարտարապետական լուծումների, շինարանական սկզբունքների, հասարակ բնակչության կենցաղի ու մշակույթի մի շարք տարաբնույթ հարցեր:

Հաշվետու շրջանում խումբը 3 գիտական հաղորդումներով մասնակցել է 2 միջազգային գիտաժողովների, հրատարակել է 4 հոդված /1-ը արտերկրում/, տպագրության է հանձնել 1 մենագրություն եւ 4 հոդված /1-ը արտերկրում/:

- Իրականացվող ծրագրում կարեւոր նշանակություն է հատկացվում նաեւ Շիրակի պատմության հին եւ նոր շրջանների մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությանը: «Ախուրյան գետի ավազանը մ.թ.ա. առաջին հազարամյակում» ենթաթեմայի շրջանակներում սեպագիր աղբյուրների մեջ Ախուրյանի ավազանին վերաբերող տվյալների համադրմամբ ու վերլուծմամբ հաշվետու տարում պատմաբանների խմբի ջանքերով

(պ.գ.դ. Ս.Պետրոսյան, Լ.Պետրոսյան) բացահայտվել են հայ առասպելաբանության նոր խորքային շերտեր, որոնք հնարավոր են դարձնում հաստատել տարածքի՝ հնագույն հնդեվրոպական-հայկական բնակչություն ունենալու իրողությունը: Շարունակվել է նաեւ Երվանդ Վերջին թագավորի (մ.թ.ա. 3-րդ դ.)՝ Ախուրյանի ձախափնյա տարածքում ունեցած պաշտամունքային շինարարական գործունեությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությունը: Վերոբերյալ խնդիրների շուրջ խումբը 2012-ին 3 հաղորդումներով հանդես է եկել երեւանյան 3 միջազգային գիտաժողովներում («Հայկազունիներ. Իրականություն եւ առասպել», «Ալբանիա-Աղվանք-Առան. Էթնոքաղաքական պատմություն եւ քրիստոնեական մշակույթի հիմնախնդիրներ» եւ «Հայաստանի քաղաքակրթական ավանդը «Մետաքսի ճանապարհի» պատմության մեջ»), հրատարակել է 1 գիտական հոդված, տպագրության հանձնել եւս 3-ը:

Կենտրոնում մեծ ծավալի աշխատանք է կատարվում Շիրակի և հարակից տարածքների նոր և նորագույն շրջանի պատմության մի շարք հիմնահարցերի նորովի մեկնաբանման ուղղությամբ: Մասնավորաբար ավարտին է հասցվել Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարասկզբի ժողովրդագրական իրավիճակին (պ.գ.թ.Ա.Հայրապետյան), այստեղ հայտնված արևմտահայ գաղթականության հոծ զանգվածների դրությանը, գավառի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, Ալեքսանդրապոլում գործող հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի հավաքումն ու վերլուծությունը (պ.գ.թ. Կ.Ալեքսանյան): Ուսումնասիրվել են նյութեր Վրաստանի պատմության կենտրոնական և Հայաստանի ազգային արխիվներում պահվող բացառիկ կարևորություն ներկայացնող մի շարք ֆոնդերից (պ.գ.թ. Ա.Ակոպով): Այս աշխատանքների մի մասը ներկայացվել է առանձին հոդվածների ձևով, մյուս մասը՝ ամփոփվել է «Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-22թթ.» փաստաթղթերի և նյութերի ստվարածավալ ժողովածուում (512 էջ): Շարունակվել է Ալեքսանդրապոլի հասարակական և կրթական կյանքի ուսումնասիրությունը ՀԱԱ ֆոնդերում (պ.գ.թ. Գ.Այվազյան): Հրատարակության է պատրաստվել Ալեքսանդրապոլի հասարակական և կրթամշակութային հաստատությունների գործունեությունը լուսաբանող արխիվային նյութերի հավաքածուն: Զգալի աշխատանք է իրականացվել նաև Ալեքսանդրապոլի մշակութային կյանքի, մասնավորապես գեղարվեստի պատմության էջերի լուսաբանման ուղղությամբ (մ.գ.թ.Լ.Աթանեսյան): Հանձնվել է հրատարակման «Գևորգ Բրուտյան. Կյանքն ու գործը» աշխատությունը (5 տպագր. մամուլ):

Հաշվետու տարում խումբը հրատարակել է 7 հոդված (2-ը արտերկրում), ևս 10-ը հանձնել տպագրման (1-ը արտերկրում), մասնակցել մի քանի հանրապետական գիտաժողովների:

- Իրականացվող ծրագրի շրջանակներում շարունակվում է մարզի ազգագրական ուսումնասիրությունը երեք ոլորտներում: Դրանցից մեկը Ալեքսանդրապոլի ավանդական կենցաղամշակութային համալիրի առանձնահատկությունների ներկայացումն է (պ.գ.թ. Կ.Բազեյան), որի վերաբերյալ հաշվետու տարում պատրաստվել է հրատարակման «Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ» աշխատությունը: Շարունակվում է ազգագրական նյութերի հավաքումն ու մշակումը Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարի առաջին քառորդի էթնոժողովրդագրական գործընթացների ուսումնասիրման ուղղությամբ (աշխ.գ.թ. Ա.Բոյաջյան): Խումբը հաշվետու տարում խնդրո առարկայի շուրջ զեկուցումներով հանդես է եկել 1 միջազգային («Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը», Երևան-Ստեփանակերտ) և երկու հանրապետական գիտաժողովներում, հրատարակել 6 հոդված (3-ը արտերկրում), տպագրության հանձնել 4-ը:

2012-ին արդյունավետ աշխատանք է տարվել նաեւ Շիրակի ավանդական երաժշտական ժառանգության, մասնավորապես Ալեքսանդրապոլում տարածված պարերի գրառված 100 նմուշների համահավաք անվանացանկի կազմման, դրանց տիպաբանական, ժանրային-ոճական բնութագրիչների ներկայացման ուղղությամբ (արվ.գ.թ. Հ.Հարությունյան): Առավել տիպական են դիտվել տեղանվան հիշատակումով, անհատ կատարողի անունով եւ «կովկասյան» կոչված, ոտնաչափերի նշումով պարերը: Ավարտման փուլին է հասցվել Հաագայի պատմական արդարության եւ հանդուրժողականության ինստիտուտի նախաձեռնությամբ կատարվող «Աշուղական ավանդույթներ. Կարս-Ալեքսանդրապոլ» համատեղ ծրագրի մեր մասը, որ նվիրված է 19-րդ դ. եւ 20-րդ դ. սկզբին երկու քաղաքների երաժշտական կյանքում նշանակալի դեր ունեցած հայ եւ թուրք աշուղների ստեղծագործական ժառանգության համեմատական քննությանը: Կատարվել են 1 հաղորդում միջազգային («Մշակույթների երկխոսություն. Հայաստանը եւ համաշխարհային մշակույթը», Գյումրի) և 2 զեկուցումներ հանրապետական գիտաժողովներում: Հրատարակվել է 3 հոդված, հանձնվել է տպագրության 5-ը:

Իրականացվող ծրագրի շրջանակներում շարունակվել է նաև էթնոհոգեբանական հետազոտություն, որ տարվում է աղետ տեսած ազգաբնակչության հոգեկարգավորման

գործընթացի մշակման, սթրեսի պահին անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ (հ.գ.թ. Կ.Սահակյան, Ռ.Հովհաննիսյան): Այդ նպատակով հաշվետու տարում իրականացվել է ակտիվ բանահավաքչական աշխատանք մարզի մի շարք բնակավայրերում: Էթնոհոգեբանների խումբը ենթաթեմայի շրջանակներում հրատարակել է 1 մենագրություն, 2 հոդված, հանձնել է տպագրման 2-ը, հաղորդումներով մասնակցել երկու հանրապետական գիտաժողովների:

Սկիզբ են առել «Շուշի-Ալեքսանդրապոլ. Քաղաքային մշակույթի աղերսներ» ազգագրական բնույթի նոր ենթաթեմայի իրականացման նախապատրաստական աշխատանքները: Այդ նպատակով հոկտեմբերին Արցախ են գործուղվել կենտրոնի երեք ազգագրագետներ՝ կապեր հաստատելու տեղի հայագիտական հաստատությունների հետ (Ստեփանակերտի համալսարան, Շուշիի պատմության և երկրագիտական թանգարաններ), հստակեցնելու ուսումնասիրության խնդիրներն ու առաջնահերթությունները:

- 2012-ին կենտրոնում սկիզբ առած «Քաղաքային խոսվածք. Գյումրու արդի լեզվավիճակի ուսումնասիրության հարցեր» ենթաթեմայի իրականացման ուղղությամբ կատարվել է խոսվածքի արդի վիճակի համակողմանի նկարագրություն (բ.գ.դ. Ս.Հայրապետյան)՝ զարգացման այն միտումների համատեքստում, որ ունեցել է խոսվածքը վերջին մեկ դարի ընթացքում, հատկապես խորհրդային տասնամյակներին և մասնավորապես անկախացումից հետո: Խոսվածքի հասարակական տարբերակվածության հարցերի քննության նպատակով կազմվել են հարցաթերթեր, որոնցով ճշգրտվում են ոչ միայն հանրալեզվաբանական տվյալներ, այլև հարցվողի հասարակական բնութագիրը: Հաշվետու տարում կատարվածը ամփոփվել է գիտական սեմինարով:

3. –

4. –

5. 2012թ. հրապարակումների ցանկը

Մենագրություն՝

1. Ալեքսանյան Կ. Վ., Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ, Փաստաթղթերի ժողովածու, Եր., Հայկարլի, 2012, 512 էջ :
2. Հովհաննիսյան Ռ.Պ., Տղա Դավթի եւ աղջիկ Խանդութի հեքիաթը, Եր., Փրինթինֆո, 2012, 112էջ:

Հոդված /զեկուցում/՝

1. Աթանեսյան Լ.Գ., XVII-XVIII դդ. հայ կերպարվեստը, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2012, էջ 495-503:
2. Աթանեսյան Լ.Գ., Վ. Խաչատրյանի ստեղծագործական աշխարհը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, 2012, էջ 131-134:
3. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլի գավառը 1920-ի թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2012, հ. 32, էջ 377-405:
4. Ալեքսանյան Կ.Վ., Հայաստանի առաջին հանրապետությունում լեզվական քաղաքականության հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, 2012, էջ 58-62:
5. Ակոպով Ա.Ա., Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցը X դարի վերջին և XI դարի առաջին քառորդին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 17-23:
6. Ակոպով Ա. Ա., Ալեքսանդրապոլի գավառը Երևանի նահանգապետի հաշվետվություններում (1870-ականներ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 144-153:
7. Այվազյան Գ., Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցը 1830-1880-ական թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., հ. 14, 2012, էջ 51-57:
8. Բազեյան Կ.Ռ., Աղանյան Գ.Թ., Ժողովրդական քրիստոնեության դրսեւորումները գյումրեցիների տոնածիսական վարքում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 80-86:
9. Բոյաջյան Ա. Գ., Էթնոժողովրդագրական գործընթացները Շիրակում 1926-1959թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 110-116:
10. Բոյաջյան Ա. Գ., Էթնոժողովրդագրությունը գիտությունների համակարգում, ԳՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր (Գյումրի,2012թ., մայիս), «Էլդորադո» հրատ, 2012, էջ 106-110:
11. Եգանյան Լ.Գ., Մեծ Սեպասարի վիշապը, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատաություններ», հ. 14, Եր, 2012, էջ 34-39:

12. Խաչատրյան Հ.Հ., Հայկաձորի ամրոց բնակավայրի 2011 թվականի պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատաություններ», հ. 14, Եր., 2012, էջ 154-162:
13. Հայրապետյան Ս.Ա., Խոսվածքի երեկն ու այսօրը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 73-79:
14. Հայրապետյան Ա.Ս., Արևմտահայության տեղաշարժի հարցը XIXդ. երկրորդ կեսի XX դարասկզբի ցարիզմի Արևելյան Հայաստանում վարած գաղութային քաղաքականության համատեքստում (Ալեքսանդրապոլի գավառի օրինակով), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 40-50:
15. Հարությունյան Հ.Հ., Ա.Բրուտյանը և Շիրակի երաժշտական կյանքը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 106-110:
16. Հարությունյան Հ. Հ., Ա. Սպենդիարյանը և հայ աշուղական երաժշտությունը, «Ա.Սպենդիարյանը և ժամանակը. Հոդվածներ և գիտաժողովի նյութեր», Եր., 2011, էջ 125-231:
17. Հարությունյան Հ.Հ., Է.Միրզոյանի կվարտետը և հայ կամերային երաժշտությունը, «Մշակույթների երկխոսություն» գիտական հոդվածների ժողովածու, Գյումրի, 2012, էջ 77-81:
18. Մատիկյան Հ.Հ., Երեխա հասկացույթը կրոնական հայեցակարգում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 135-139:
19. Պետրոսյան Ս.Գ., Պետրոսյան Լ. Ս., Անին եւ Երվանդունիները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2012, էջ 24-33:
20. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Աղոթք եւ հոգեթերապիա, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Եր., 2012, էջ 87-92:
21. Սահակյան Կ.Ա., Խոսքի, բառի և ձայնի հոգելեզվաբանական բնութագիրը, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, ԳՊՄԻ. 28-29 նոյեմբերի, Գյումրի, 2012, էջ 483-490:
22. Базеян К.Р., Ткачество и рукоделие, в книге «Армяне»: Серия «Народы и культуры», изд. АН РФ, М., 2012, с. 185-197.
23. Базеян К.Р., Армянское игольное кружево,«Мир музея», иллюстрированный исторический и художественный журнал, М., 2012, № 9, с. 44-47.
24. Базеян К.Р., Аганян Г.Т., Городская община Александраполя и эснафства, "Аджария в архивных документах", Батуми 21-23. 09 2012г., с. 190-193 :

25. Еганян Л.Г., Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индоевропейских верований и ритуалов, Институт этнологии и антропологии имени Миклухо-Маклая РАН, Труды Маргианской археологической экспедиции, том. 4, М., 2012, стр. 272-290.

Հանձնված է հրատարակության

1. Աթանեսյան Լ.Գ., Հայկական գորգը արևմտաեվրոպական նկարիչների ստեղծագործություններում, տեքստ պատրաստված Մշակույթի նախարարության վիրտուալ թանգարանի համար /0.3 մամուլ/:
2. Աթանեսյան Լ.Գ., Նկարչուհի Ս. Մկրտչյանի ստեղծագործական աշխարհը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15 (0.4 հրատ. մամուլ):
3. Աթանեսյան Լ.Գ., Գևորգ Բրուտյանի կյանքն ու գործունեությունը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ», պրակ 2, (5 հրատ. մամուլ):
4. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականության դրությունը 1918-1921թթ. Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2013, հ. 33 (1.0 հրատ. մամուլ)
5. Ալեքսանյան Կ.Վ., Թուրքական ցեղասպանության քաղաքականության դրսևորումները Ալեքսանդրապոլի գավառում 1918թ.: ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Գյումրի 2013, հ.15 (0.8 հրատ.մամուլ)
6. Ակոպով Ա.Ա., Տայքի հայ-քաղկեդոնական հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15 (0,5 հրատ. մամուլ):
7. Ակոպով Ա.Ա., Արևմտյան Շիրակը Կարսի գեներալ-նահանգապետի զեկուցագրերում (1890-ականներ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15 (0,8 հրատ. մամուլ):
8. Այվազյան Գ., «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գործունեությունը 1880-1890-ական թվականներին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012 (0,4 հրատ. մամուլ) :

9. Այվազյան Գ., Արխիվային փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գրադարան-ընթերցարանների մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., հ. 15, 2012 (0,6 հրատ. մամուլ):
10. Բազեյան Կ.Ռ., Ավանդական արհեստների արդի կենցաղավարումը Շիրակում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., հ. 15, 2012 (0,7 հրատ. մամուլ):
11. Բազեյան Կ. Ռ., Աղանյան Գ. Թ., «Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ» (պատմազգագրական ուսումնասիրություն), «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշար, պր. 2, «Գիտություն» հրատ, Եր., 2012 (10 հրատ մամուլ):
12. Բոյաջյան Ա. Գ., Հայաստանում ժողովրդագրական իրադրությունը անցումային շրջաններում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2013 /0,6 հրատ. մամուլ/:
13. Բոյաջյան Ա. Գ., Ալեքսանդրապոլի գավառի գյուղատնտեսության դրությունը XIXդ. վերջին և XXդ. առաջին քառորդին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012, ԳԱԱ «Գիտություն հրատ» /0,6 հրատ մամուլ/:
14. Եգանյան Լ.Գ., Անիի կանացիակերպ աղամանը (ազգագրական աղամանների եւ հնդեվրոպական հավատալիքների համատեքստում), «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշար, պր. 2, «Գիտություն» հրատ, Եր., 2012 (12 հրատ մամուլ):
15. Եգանյան Լ.Գ., Քուռարաքսյան մի կարասի զարդագոտու խորհրդանիշ-նշանների շուրջ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 15, Եր., 2012 (0.6 հրատ մամուլ):
16. Եգանյան Լ.Գ., Վահագն Վիշապաքաղ (պաշտամունքի դրսեւորումները վաղբրոնզի-դարից մինչեւ Բարեկենդան-Աբեղաթող), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 15, Եր., 2012 (1.3 հրատ մամուլ):
17. Եգանյան Լ.Գ. եւ համահեղինակներ, Պեղումներ և հետազոտություններ Երերույքում, Էքաս-ան Պրովանսի համալսարան, 2012թ., 292 էջ (ֆրանսերեն) :
18. Հայրապետյան Ս.Ա., Գյումրու արդի խոսվածքի հասարակական տարբերակվածության հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012 (0,7 հրատ. մամուլ):

19. Հայրապետյան Ա.Ս., Մտորումներ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրի լեգիտիմության հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012 (0,9 հրատ. մամուլ):
20. Հարությունյան Հ.Հ., Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը Պետրոս Մոճոռյանի հուշերում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012 (0.3 հրատ մամուլ):
21. Հարությունյան Հ.Հ., Աշուղական արվեստի ազգային բնորոշիչների շուրջ: Գիտական հոդվածների ժողովածու, Գյումրի, 2012 (0,4 հրատ մամուլ):
22. Հարությունյան Հ.Հ., Առնո Բաբաջանյանի կինոերաժշտությունը: Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2012 (0.4 հրատ մամուլ):
23. Հարությունյան Հ., Շարա Տալյանը և Սայաթ-Նովայի ստեղծագործական ժառանգությունը, Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2012 (0.4 հրատ մաուլ):
24. Հարությունյան Հ.Հ., Վարոսյան Ե.Ռ., Շիրակի ավանդական պարերը Ա.Բրուտյանի գրառումներում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012, (0.3 հրատ մամուլ):
25. Պետրոսյան Լ.Ս., Պետրոսյան Ս.Գ., «Հայոց ջրորդու» պաշտանմունքի եկ «վիշապ կոթողների» նշանակության մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012, (0.9 հրատ մամուլ):
26. Պետրոսյան Ս.Գ., Սեպագրային Էթիունին եւ քսենոփոնյան «Հնդիկ» -ի թագավորությունը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 15, Եր., 2012, (0.8 հրատ մամուլ):
27. Պետրոսյան Ս.Գ., Ամպրոպի աստծո մակդիրները գահանուններում, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողով, Վանաձոր, 2012 (0.7 հրատ մամուլ):
28. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Անին շեն, աշխարհն ավեր, աշխարհը շեն, աշխարհն ավեր, Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն, միջազգային գիտաժողով, նյութերի ժողովածու, Եր., 2012 (0.6 հրատ մաուլ):
29. Կ.Սահակյան, Ռ.Հովհաննիսյան, Հացի հետ կապված հավատալիքները Շիրակում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», պրակ 15, Եր., «Գիտություն», 2012 (0.5 հրատ մամուլ):

30. Еганян Л.Г., Худавердян А.Ю., Реконструкция особенностей жизнедеятельности населения эпохи железа Армянского нагорья по данным антропологии// X конгрес этнографов и антропологов России. Секция №36 ,,Расселение, миграция и адаптация в проблемном поле этнической демографии,, Институт этнологии и антропологии имени Миклухо-Маклая РАН, 2013г.

6. ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ. տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան, գիտքարտուղար՝ արվեստագիտ. թեկն. Հասմիկ Հայկի Հարությունյան,

էլ. փոստ՝ hkentron@mail.ru

ինտերնետային կայք՝ www shirakcenter.sci.am

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա/ -

բ/ -

գ/ 4, 11, 2

8. -

9. –

10. ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ԳՊՄԻ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Հայաստանի պատմության ազգային, Հ. Շարամբեյանի անվան ժող. արվեստի, Գյումրու երկրագիտական եւ ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, եւ ԳԱԹ հետ: Համատեղողների թիվը՝ 8:

11. -

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Գիտքարտուղար՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2012թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)		
		Բազային	Թեմատիկ	Տնտ. Պայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1 23.222.200դր.		

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում արտ. Երկրից
1	2	3	4	5
1	Գիտական նստաշրջան եւ ցուցադրանք՝ «Շիրակի նորահայտ հնագիտական հուշարձաններ»	Գյումրի, 16-17 մայիսի, Հայկաձոր-Աշոցք ՇՀՀ կենտրոն, Շիրակի երկրագիտական թանգարան	11	-
2	Հանրապետական գիտական ընթերցումներ՝ նվիրված հայ գրքի տպագրության 500-ամյակին	7 հուլիսի, Գյումրի ՇՀՀ կենտրոն, ԳՊՄԻ հետ համատեղ	7	-
3.	«Անուշ» օպերայի Ալեքսանդրապոլյան պրեմիերայի 100-ամյակին նվիրված գիտական ընթերցումներ	12 սեպտեմբերի, Գյումրի, ՇՀՀ կենտրոն կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ	5	

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդածությունների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Վրաստան Ֆրանսիա, Գերմանիա,		3 5 4	1 2 1

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2012թ. Ֆինասավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ ($,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	23.222.200				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2012թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4		5			6	7
	ՇՀՀ կենտրոն	1				27	6		

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2012թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն		1		

Աղյուսակ 10

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2013թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդ-հանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ԳԱԱ ակադեմի կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	
	ՇՀՀ կենտրոն	22	17			2	10

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**